№ 227 ԿԻՐԱԿԻ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1913 ԿԻՐԱԿԻ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 227

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Երկուշաբթի, հոկտեմբերի 14-ին
ՇՔԱՀԱՆԴԷՍ
Տառերի գիւտի 1500-ամեայ եւ տպագրութեան 400-ամեայ
ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ
Կը ներկայացնէ առաջին անգամ
(ՅԱՏՈՒԿ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ ԳՐՎԱԾ)
ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ
Ակնարկ 2 արար. հեղ. Ա. Արմէնեանի
(Ըստ Մովսէս Խորենացու, Ղազար Փարփեցու, Րաֆֆիի և Լէօի ուսումնասիրութեան)
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—Տ. տ. Աշխէն, Արմէնեան-Դուրեան, Արուսեակ, Գուլազեան, Ցամրիկ, պ. պ. Ալլահվերդեան, Աղայեան, Բերոյեան, Զարիֆեան, Թաշճեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Մուրադեան, Յարութիւնեան, Տէր-Առաքելեան, Փափազեան, Օվի-Ահարոնեան, աշխատակից-աշխատակցուհիներ և ուրիշներ։
ՔԱՌՈՒՍՋԱՅՆ ԽՄԲԵՐԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ Մ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ։
Ներկայացումից առաջ կը լինի կարճ դասախօսութիւն։
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ
Թատրոնի դուրսը և ներսը կը լինի շքեղօրէն զարդարված և à giorno լուսաւորված։
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ պ. պ. Ա. Նազարէթեան, Յ. Քոչարեան

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ի յիշատակ
Հայ գրերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՎ
ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Արդէն բաց է արել Ազգագրական Ընկերութեան դահլիճում
ՌՈՒՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆԸ.
Կազմված է բոլոր թերթերի գրախօսութիւնը. ցուցադրված է բոլոր խմբագիրների խմբանկարը։ Չորեքշաբթի, հոկտեմբերի 16-ին, երեկոյեան ժամը 8-ին նոյն տեղը տեղի կունենան հետեւեալ դասախօսութիւնները.
Ե. Լալայեան. Հայ գրերի և տպագրութեան կատարած դերը հայերիս մէջ։
Մ. Մատէնճեան. Ռուսահայ մամուլը։
Ցուցահանդէսը բաց է առաւօտեան ժամը 10—2-ը, իսկ մասնագիտօրէն պարապողների համար առաւ. ժամը 9 մինչև գիշերվայ ժամը 12-ը։ Մուտքը ձրի է։
Դասախօսութեան մուտքը հրաւիրագրերով է։ (չ.) առ. 879. 2—1

Դեղային Ապրանքներ Վաճառող
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԹԻՖԼԻՍ—ԲԱԳՈՒ—ԲԱԹՈՒՄ
յայտնում է ի տեղեկութիւն իր գնորդների, որ Օլգինսկայա փողոցի վրա, Մելիք-Ազարեանի նորաշէն տանը
ԲԱՑԵԼ Է
ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹ,
ուր գտնվում են ամեն տեսակ ապրանքներ—կօսմէտիկայի, պարֆիւմէրիայի, տուալէտի, տնտեսութեան, ախտահանութեան վերաբերեալ և այլն, և վաճառվում են նոյն գներով, որպիսիք գործադրվում են Երեւանեան հրապարակի վրա գտնվող խանութում։ Տելեֆօն № 15—93.
առ. 881. 1—1

„ՄԻՐ" ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿ.
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն իր կլիէնտների, որ
ԳՈՐԾԱՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏԵԼ,
որովհետև պատահած հրդեհը տեղի է ունեցել միայն ֆաբրիկայի մթերային պահեստում։
ՀԵՏԵՒԱԲԱՐ ԲՈԼՈՐ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ
ԿԸ ԿԱՏԱՐՎԵՆ ՃՇԳՐԻՏ
առ. 877. 2—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերսկսում է ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) առ. 92 100—90

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ։
(Առանձն. կրծքի, թոքախտի և սրտի պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը
Երաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)։
(ե.հ.կ.) առ. 774. 100—12

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонарь) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ., մանկական հիւանդութիւն ունեցողներին երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ցեր. ժամը 3—4-ը։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ն. Զ. Ռմիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(ե. հ.կ.) առ. 779 100—95

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԵՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւնը՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Աբաս-Աբադսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 769. 74—13

ՓՈՐՁԵՑԷՔ ԾԽԵԼ
ՆՈՐ
ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
ՉԱՅԿԱ
ԸՆԿ.
„ԿՕՄԷՏԱ"
ԹԻՖԼԻՍ
20 հատը 6 կ., 10 հատը 3 կ.
(հ.կ.) առ. 803. 10—7

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՈՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր տեղի կունենայ տօնական երկու խոշոր ներկայացում։ Աշխարհահռչակ վելօսիպեդիստ Չէստէր-Դիկի դեբիւտը։ Մասնակցում են նոյնպէս ժողովրդ. ծաղրածուներ եղբ. Վինչենցօներն և այլ առաջնակարգ արտիստներ։ Սկիզբը երեկոյեան 7½ ժամին։ Հանդէս կը գայ Չէստէր-Դիկը՝ երրորդ բաժ., որ կը սկսվի երեկոյեան 10 ժամին։ ԱԶԴ.—Բոլոր ապաստարանների երեխաները կարող են ներկայ լինել այսօրվայ ցերեկվայ ներկայացմանը ձրիաբար։
առ. 878. 0-6



По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ДУШКИНСКАЯ №7.
(հ. կ.) 357 50—46

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին
Հայկ. Դրամ. Խմբակցութիւնը
Մասնակցութ. դերասանների
Տառերի 1500-ամ. և տպ. 400-ամ. Յօբել. գիւտի առիթ.
Կը ներկայացնէ
ՍԱՆԴՈՒԽՏ
Պատմ. պիէս 4 գ. 7 պատ. հեղ. Գ. Զուբարի
Մասնակցում են.—Տ. տ. Աբովեան, Ագամեան, Արուսեակ, Սաթենիկ, օր. օր. Ալիխանեան, Մելիք-Այվազեան, Սօլովեան, պ.պ. Երամեան, Թաշճեան, Խարազեան, Հախնազարեան, Ծոնեան, Յարութիւնեան, Յարութիւնեան II, Յովհաննիսեան, Սերժ, Ռուսեան, Օհանեան և ուրիշ.։
Ներկայացումից առաջ Բենիկ վարդապետ կը խօսէ տառերի և տպագրութեան հայ ժողովրդին տուած կուլտուրական նշանակութեան մասին։
Ներկայացումից յետոյ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ։
Տեղերի գները 5-ից—50 կօպէկ։
Սկիզբը 8 ժամին երեկոյեան։
Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Մալխասեան և Սարեան
Վարագոյրը բարձրանալուց յետոյ դահլիճի մուտքի բոլոր դռները փակվում են մինչև խաղամիջոցը։

Կ. Հ. Հրատարակչ. Ընկ.
Հայ գրերի գիւտի 1500-ամ. եւ հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանի առիթով
Լոյս տեսաւ շքեղ հրատարակութեամբ
„Ս. Նազարեանի երկերը"
I հատոր
կենսագրական ակնարկով (Ն. Աղբալեանի), հեղինակի պատկերով, ձեռագրի օրինակով, «Հիւսիսափայլի» նկարով և նրա բոլոր աշխատութիւնների մանրամասն ցանկով։
[illegible]
Դիմել՝ Թիֆլիսի և գաւառների հայ գրավաճառներին, ընկ. ճիւղերին, հայաբնակ վայրերի մանր վարկի ընկ. և աշխատակից անդամներին։ Պահեստը ընկ. մօտ. Тифлисъ, Абасъ-Абадская пл. № 7.

ԳԻՐԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Մեծ ուրախութիւն և մեծ հրճուանք է ունենալ 1500-ամեակ մի այնպիսի հրաշագեղ գործի, ինչպէս է տառերի գիւտը։

Դա նշանակում է՝ ունենալ ազնուագոյնը և հզօրագոյնը այն զէնքերից, որ կարող է ունենալ մարդկութիւնը իր ձեռքին իր անդադար առաջդիմութեան համար։

Բայց միենոյն ժամանակ մի տրտմութիւն և մի վիշտ պատում է մարդուն, երբ նկատում է, որ հայ մարդը պատմական ծախորդ հանգամանքների շնորհիւ անկարող է եղել օգտվել գրերի գիւտից այն չափով, որ նա այսօր լինէր հաւասար առաջնակարգ քաղաքակիրթ մարդկային համայնքների հետ։

Տասնհինգ դար սրանից առաջ գիրը շնորհվեց հայութեան, բայց նա մինչև այսօր միայն մասամբ դարձաւ ժողովրդական սեփականութիւն, իսկ հայութեան ստուարագոյն խաւերը անմասն են մնացել գրի վերանորոգիչ և բեղմնաւոր ազդեցութիւնից։

Ս. Մեսրոպի սքանչելի գիւտը այսօր, տասնհինգ դարերից յետոյ, մի պատգամ է դնում մեր սերնդի առաջ—ամեն ճիգ թափել դարձնելու գիրը ժողովրդական, յանձնելու այդ զէնքը ազգային ընդարձակ խաւերին իբրև ուժեղ կենսական մի գործօն, ճանաչելու նրան նոյնպէս անհրաժեշտ և էական, ինչպէս հանապազօրեայ նրա ուտելիքը։

Գիրը զէնք է գործնական կեանքի համար, գիրը միջոց է մտաւոր առաջդիմութեան համար, գիրը գործօն է բարոյական զարգացման և կատարելութեան համար։

Գիրը, այդ հրաշագործ երկնառաք [illegible] վրդի համար։

Գիրը—ժողովրդին։

Ահա նշանաբան առաջիկայի համար։

Ա. Քալանթար

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—

(Սեփական հեռագիր)

Էջմիածին, 12 հոկտեմբերի

Երկրագնդի բոլոր հայաբնակ վայրերից թէ եկել և թէ նշանակված են մօտ 70 պատգամաւոր։

Ամեն օր ստացվում են շնորհաւորական հեռագիրներ զանազան տեղերից։

Ուրբաթ, երեկոյեան ժամը 5-ին, տեղի ունեցաւ Կաթողիկոսի հանդիսաւոր երթը տաճար։ Վեհափառին ուղեկցում էին արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, միաբանութիւնը և պատգամաւորները։ Կաթողիկոսի ամպհովանին բռնած ունէին՝ Թիֆլիսի վաճառականապետ Ա. Միլեան, Թաւրիզի վաճառականապետ Զ. Նազարբէկեան, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան և Մոսկվայի պատգամաւոր Կուսիկեան։

Երեկոյեան ամբողջ բակը լուսավառված էր և նուագում էր երաժշտութիւնը։ Էլեքտրական լուսաւորութեամբ շքեղ կերպով լուսազարդված էին ս. Մեսրոպի և ս. Սահակի պատկերները։

Երեկոյեան ժամը 7-ին Հ. Առաքելեանի նախագահութեամբ կայացաւ պատգամաւորների ընդհանուր ժողով մատենադարանի մեծ դահլիճում.

Հ. Առաքելեան բանալով ժողովը՝ առաջարկեց վերջինիս քննութեան առնել մի խումբ պատգամաւորների հետեւեալ առաջարկութիւնները. 1) Կաթողիկոսին շնորհակալական ուղերձ ներկայացնել Համազգային Յօբելեանը կազմակերպելու համար. 2) Հայկական հարցի առիթով ուղարկել Պարիզ Պօղոս Նուպար-փաշային շնորհակալական ուղերձ. 3) Քննութեան առնել դպրոցական ֆոնդի կազմակերպման հարցը. 4) Պատգամաւոր Թ. Խզմալեանի առաջարկը՝ ի մօտոյ ծանօթանալ Մատթէոս եպիսկոպոսի Թիֆլիսում արած վերջին հաղորդագրութեանը վերաբերեալ դօկումենտների հետ։

Ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց այդ 4 առաջարկը, և Հայկ Տէր-Միքայէլեանի նախագահութեամբ քննութեան ենթարկելով նրանց, ընտրեց մի յանձնաժողով՝ խմբագրելու ուղերձները և պատրաստելու զեկուցումներ դպրոցական ֆոնդի և ուսուցչական խնդրի վերաբերեալ։

Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Հ. Առաքելեան, Եւանգուլեան, բանաստեղծ Յ. Յովհաննիսեան, Իսահակ Յարութիւնեան, Ա. Միլեան, Յ. Ամիրխանեան, Թ. Խզմալեան և Ա. Ջամալեան։

Շաբաթ, առաւօտեան ժամը 8-ին, սկսվեց Կաթողիկոսի, բոլոր հոգեւորականութեան և պատգամաւորների շքերթը դէպի Օշական գիւղը։ Կաթողիկոսի փակ կառքին հետեւում էին մօտ 50 կառքեր։

Օշականում հաւաքվել էր ժողովրդի հոծ բազմութիւն։ Պատարագիչն էր Այվատեան արքեպիսկոպոսը։ Պատարագից յետոյ Կաթողիկոսը՝ շրջապատված հոգեւորականներով, պատգամաւորներով և բազմաթիւ ժողովրդով հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց հայ տառերի գտիչ ս. Մեսրոպի գերեզմանի վրա։ Հոգեհանգստից յետոյ եղաւ ժողովրդական նախաճաշ։ Ասվեցին ճառեր և տեղի ունեցան շնորհաւորութիւններ։

Շքախումբը կը վերադառնայ Քասախ գետի ափով։

Օշական գիւղը այդ օրը մի հրաշագեղ պատկեր էր ներկայացնում իրանից։

Գլխաւոր տօնակատարութիւնը տեղի կունենայ վաղը Էջմիածնում։

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

—

Վաղարշապատ, 9 հոկտ.

Մի երեք օր յետոյ կատարվելու են Էջմիածնում գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի հանդէսները։

Առ այժմ եկել են 5 պատգամաւոր. սպասվում է և յայտնի է յանձնաժողովին, որ գալու են նաև զանազան տեղերից մօտ 40 հոգի։ Վեհափառը կարգել և հաստատել է յոբելեանական յանձնաժողովի անդամներ. իսկ վերջիններս ընտրել են թէ իրանց միջից և թէ դրսից կարգադիր յանձնաժողովի անդամներ։

Յանձնաժողովի անդամներն են. նախագահ՝ միաբան Գալուստ Տէր-Մկրտչեան, Բագրատ և Մատթէոս եպիսկոպոսները, Ներսէս, Վրթանէս և Գէորգ վարդապետները, Մ. Աբեղեան, Ս. Կանայեան, Գ. Ալթունեան և Գ. Էդիլեան։

Իսկ կարգադրիչ յանձնաժողովի անդամներն են՝ Մուշէ, Աբիստակէս, Ռուբէն, Վրթանէս և Գէորգ վարդապետները, Կարապետ սարկաւագը, Կ. Քոչարեան և Ց. Գրիգորեան։

Համազգային մեծ յոբելեանի տօնակարգը այսպէս է կատարվելու Էջմիածնում։

Ուրբաթ, հոկտ. 11-ին, եր. ժամը 5-ին, Նորին Վեհափառութիւնը պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով կը գնայ Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարվելիք նախատօնակին։

Շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, հոկտ. 12-ին, առ. ժ. 8-ին, Վեհը հանդիսաւոր կերպով կը գնայ Օշական՝ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների ուղեկցութեամբ։ Պատարագը կը սկսվի ս. Մեսրոպի գերեզմանի վրա ժամը 10-ին։ Պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի գրերի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Յետոյ պատգամաւորները կը բանախօսեն և կը լինի ուղերձների ընթերցումը։

Կիրակի, հոկտ. 13-ին, ժամը 9-ին, Մայր Տաճարի Իջման Սեղանի վրա հանդիսաւոր պատարագ և յետոյ հայրապետական մաղթանք կը կատարվի։ Պատարագից յետոյ, ժ. 12-ին, ճեմարանում կը կայանայ ցերեկոյթ երգեցողութիւնով և երաժշտութիւնով միասին և ապա հեռագիրների ընթերցումը։

Շաբաթ և կիրակի երեկոները ժ. 7-ին և երկուշաբթի առաւօտեան ժ. 10-ին՝ ճեմարանում կը լինեն գիտական ռեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։ Շաբաթ և կիրակի երեկոները կը լինեն զինւորական երաժշտութիւն և հրավառութիւն թէ վանքի և թէ ճեմարանի բակում։

Վանքը մեծ շարժման մէջ է, աշխատում է եկող հիւրերին արժանավայել ընդունելութիւն ցոյց տալ։ Հիւրընկալ Վրթանէս աբեղան հիւրատան մաքրութեան, կարգ ու կանոնի համար արժանի է գովեստի։

Մաքրվում են և Վաղարշապատի շուկան ու փողոցները։ Հրապարակում շինվում են ժամանակաւոր վրանի ձեւով խանութներ՝ զանազան մրգեր ծախելու համար։ Գալիս են և զանազան տեղերից նուագածուներ

Այսօր Վեհ. Հայրապետին ներկայացաւ Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեանը։

Վ. գ. Աղաղաւեան

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Երէկ, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 11-ից քաղաքում սկսեցին փակվել հայկական վաճառականական հիմնարկութիւնները համազգային մեծ տօնի առիթով։

Միաժամանակ հայ կրթական հաստատութիւններից՝ աշակերտներն ու աշակերտուհիները իրանց հոգաբարձական ու ուսուցչական կազմերով սկսեցին հաւաքվել Վանքի գաւթում։

Գաւթի թէ մուտքը և թէ առաջնորդարանն ու Ղուկասեան Թանգարանը զարդարված էին դրօշակներով։ Ժողովրդի հոծ բազմութիւնը, որ խռնված էր թէ տաճարում և թէ դրսում, հետզհետէ աճում էր։

Ժամը 10-ից սկսվեց հանդիսաւոր պատարագը, որ մատուցանում էր Աշոտ եպիսկոպոսը։

Պատարագին երգում էր երկսեռ քառաձայն խումբը։

Պատարագի միջոցին օրվայ մեծ տօնի առիթով բաւականին ուշագրաւ քարոզ խօսեց Աշոտ եպիսկոպոսը շեշտելով առհասարակ մեծ մարդկանց, հանճարների նշանակութիւնն ու խաղացած դերը ժողովրդի վերածնութեան գործում։ Մասնաւորապէս ս. Մեսրոպին դառնալով, քարոզիչը համարեց նրան հայ ժողովրդի իմացականութեան ու կուլտուրական կեանքի արդիւնքը, շեշտելով որ ս. Մեսրոպի նման ստեղծագործողները առաջ են գալիս դարերի ընթացքում ու անմահանում։ Իր քարոզի վերջում սրբազանը օրհնեց ժողովրդին ու կոչ արեց դրական մասնակցութիւն ցոյց տալ ներկայ մեծ տօնի յաւերժացման գործին։

Տաճարը ծայրէ ի ծայր լի էր ժողովրդի խուռն բազմութեամբ։ Պատարագից յետոյ սրբազան պատարագիչը շրջապատված հոգեւորականութեամբ և Թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի ուղեկցութեամբ դուրս եկաւ տաճարից ու բակում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց ս. Մեսրոպի յիշատակին։ Շուրջը օղակ կազմած շարքով կանգնած էին հայ դպրոցների աշակերտները իրանց դասատուներով, հասարակական ու կուլտուրական հաստատութիւնների և վաճառականութեան ներկայացուցիչները, մամուլի ներկայացուցիչները, հայ գրականագէտները և այլն։ Ներկայ էին նաև I առևտրական դպրոցի ու Մանթաշեան վաճառականական դպրոցի ու մի քանի գիմնազիաների հայ աշակերտները, Ս. Վ. Արզութեան-Երկայնաբազուկի և Սմբատեանի պանսիոնների սաները։ Վերջինիս պանսիոնի սաների բոլորի կրծքին բաւականին սրամտօրէն կպցրած էր մի-մի հայ տառ, այնպէս որ շարքով գնալիս՝ երեխաների շարանը ներկայացնում էր միաժամանակ ամբողջ այբուբենը։

Մօտաւորապէս ժամը 1-ին վերջացաւ հոգեհանգիստը, և ժողովուրդը տօնական տրամադրութեամբ սկսեց ցրվել։ Շատերը առաջնորդարան մտան ու իրանց շնորհաւորութիւններն արտայայտեցին առաջնորդին մեծ տօնի առիթով։ Լ.

—

Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին, Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպ. պատարագ կը մատուցանի Վանքի մայր-եկեղեցում, իսկ օրվայ առիթով քարոզ կը խօսի Բենիկ վարդ.։ Պատարագի սկիզբն է առաւ. ժամը 10-ին։ Պատարագից յետոյ կը կատարվի հայրապետական մաղթանք, որից յետոյ եկեղեցական թափօրը ժ. 12½-ին կուղևորվի դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը, ուր հանդէսը կը սկսվի ժ. 2-ին՝ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի մի բանախօսութեամբ։ Առաջնորդի բանախօսութեանը կը հետևի կայսերական հիմնը, որ կը կատարէ խումբը։ Ապա՝ օտարազգի հիւրերի համար Ս. Խատիսեան և Ստ. Լիսիցեան կը բանախօսեն ռուսերէն, որից յետոյ տեղի կունենայ շնորհաւորութիւնների ընդունելութիւնը։

Իսկ վաղը, երկուշաբթի, ամսիս 14-ին, ցերեկվայ ժ. 2½-ին Թիֆլիսի Ժողովարանում տեղի կունենայ բանկէտ, իսկ եր. ժ. 8-ին Արտիստական Ընկ. թատրոնում կը կայանան «Սահակ-Մեսրոպ» պիէսի ներկայացումը և կենդանի պատկերներ։

—

Թիֆլիսի II առևտր. դպրոցի վարչութեան կարգադրութեամբ երէկ, հոկտ. 12-ին, տառերի գիւտի և տպագրութեան տօնի առիթով Վանքի բակում ներկայ էին բոլոր հայ աշակերտները իրանց ուսուցիչների հետ։

Նոյն դպրոցի վարչութեան որոշումով այսօր Ներս. դպրոցի հանդէսին իբրև ներկայացուցիչներ կը լինեն՝ հոգաբարձութեան կողմից պ. Արամ Յովհաննիսեան, իսկ ուսուցչական կազմի կողմից՝ պ. Ս. Բամալեան։

Կ. Հ. Բ. Ընկերութեան կողմից ստացված են 20 օր. «Ս. Մեսրոպ» գրքից, Մեսրոպ առաջնորդի կողմից 100 օր. «Հայ գրերի տօնը» գրքից և 200 հատ ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները՝ դպրոցի հայ աշակերտներին բաժանելու համար։

—

Ուրբաթ, ամսիս 11-ին, համազգային տօնի առիթով, Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածնի եկ.-ծխական դպրոցում կայացաւ գրական-երաժշտական աշակերտական հանդէս։ Գրական մասը ղեկավարում էր պ. Պ. Յովհաննիսեան, իսկ երաժշտականը՝ պ. Ա. Վարդանեան. Թէ գրական և թէ երաժշտական բաժինները—չը նայած պատրաստութեան կարճ ժամանակին—անցան աջող։ Դպրոցի ատ.-ուս. Պ. Յովհաննիսեան խօսեց օրվայ նշանակութեան մասին, մատչելի լեզուով նկարագրելով տառերի գիւտը և այն խոշոր ծառայութիւնը, որ ս. Մեսրոպ և ս. Սահակ մատուցել են հայ ազգին՝ տալով նրան գրեր, գրականութիւն և դպրոց։ Աշակերտները և իրանց ծնողները հեռացան գոհ սրտով։

—

Թիֆլիսում Բոզարջեան եղբայրները համազգային մեծ տօնի առիթով երէկ իրանց գործարանը փակ պահեցին ամբողջ օրով, չը հանելով բանւորների օրավարձից այդ օրվայ չաշխատած վարձատրութիւնը։ Գործարանում տրվեց ճաշ ծառայողներին։

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Մեզ հաղորդում են Վենետիկից, որ այնտեղ ամսիս 6-ին և 7-ին (19 և 20 ն. տ.) մեծ հանդէսով կատարվել է համազգային մեծ յոբելեանի տօնախմբութիւնը։

Ինչպէս յայտնի է, հայ գրերի գիւտի 1500-ամեակի մասամբ առաջին ուշագրաւ տեղն է Օշականը, ուր հանգչում են մեծ գոչի՝ ս. Մեսրոպի նշխարները։ Սակայն ինչ վերաբերում է տպագրութեան 400-ամեակին, անկասկած առաջին ուշագրաւ տեղն է Վենետիկ քաղաքը Իտալիայում, ուր 1512—13 թ. առաջին անգամ ճռնչեց անդրանիկ հայ մամուլը, լոյս ընծայելով հայատառ տպագրութեամբ ազգային առաջին երախայրիքը՝ «Պարզատումար», «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Տաղարան» և «Աղթարք» գրքոյկները։

Ուրեմն, այնտեղ, հեռաւոր Վենետիկում, մեր անդրանիկ տպագրական գործունէութեան օրրանում, ազգային վերածնութեան և մտաւոր զարգացման համար նշանակալից դարձած ս. Ղազար կղզում և վանքում, կրկնակ յոբելեանները տօնվել են պատշաճ հանդիսաւորութեամբ, հետևեալ ծրագրով.

Հոկտ. 6 (19) կիրակի.—Առ. ժ. 9½-ին, սկսվել է հայրապետական պատարագ, հայկական ծէսով և արարողութեամբ։ Պատարագիչն է եղել Իգնատիոս Կիւրեղեան արքեպիսկոպոսը, որ ընդհանրական աբբան է Մխիթարեանների։

Երեկոյեան ժ. 5-ին տեղի է ունեցել ժամերգութիւն, ապա հսկումն և օրհնութիւն։

Հոկտ. (7 20) երկուշաբթի.—Ս. Ղազարի տօնի առիթով, որին նուիրված է Մխիթարեանների վանքի եկեղեցին, պատարագը մատուցել է, ժ. 8½-ին, յատուկ հրաւիրված՝ Վենետիկի պատրիարք ծերունաւոր Արիստիդէս Կավալլարի։

Նոյն օրը, առ. ժ. 10-ին, կայացել է գրական-երաժշտական ցերեկոյթ։ Հանդիսականները գնացել են տեսնելու հին ձեռագիր և տպագիր յիշատակարանները, որոնք խնամքով պահված են Մխիթարեանների վանքի մատենադարանում և տպարանում։

Ցերեկվայ ժ. 2-ին տեղի է ունեցել հանդիսաւոր ճաշկերոյթ, որին ներկայ են եղել բոլոր միաբանութիւնը, բազմաթիւ հրաւիրեալներ և պատուաւոր հիւրեր։ ⁂

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին, Էջմիածնում առ. ժ. 9-ին Մայր-Տաճարի Իջման Սեղանի վրա կը կատարվի հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժ. 12-ին՝ Գէորգեան ճեմարանում տեղի կունենայ ցերեկոյթ՝ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշի միջոցին՝ ժ. 3-ին՝ կը կարդացվեն զանազան կողմերից ստացված շնորհաւորական հեռագիրները։

Ապա երեկ. ժ. 7-ին, ինչպէս և վաղը, երկուշաբթի, հոկտ. 14-ին, առ. ժ. 10-ին ճեմարանում կը շարունակվեն ուղղագրութեան խնդրի շուրջը տեղի ունեցող գիտական ռէֆէրատներն և խորհրդակցութիւնը, որոնք սկսվեցին երէկ երեկոյեանից։

Վանքի և ճեմարանի բակում այսօր երեկոյեան—ինչպէս և երէկ՝ շաբաթ երեկոյ—տեղի կունենայ երաժշտութիւն և հրավառութիւն։

—

Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին, ռուսահայ թեմերի բոլոր եկեղեցիներում տեղի կունենան հանդիսաւոր պատարագներ և հայրապետական մաղթանքներ։ Ապա՝ տեղական պայմաններին նայած՝ կը կազմակերպվեն գրական և երաժշտական ցերեկոյթներ կամ երեկոյթներ, եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց մասնակցութեամբ ու ներկայութեամբ։ Հանդէսները կը բացվեն «Հայր-մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ Էջմիածնի շարականով։

—

Ամերիկահայերի ազգ. վարչութիւնը դիմել է «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարին, Հ. Առաքելեանին, ինչպէս և Կարապետ եպիսկոպոսին, խնդրելով որ սրանք, յոբելեանական ներկայ տօնակատարութիւնների ժամանակ Էջմիածնում, պաշտօնապէս ներկայացնեն ամերիկահայութեան շնորհաւորանքները։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան հայ ծառայողները ուղարկեցին շնորհաւորական հեռագիր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի անունով։

—

«Тифл. Листокъ» թերթի խմբագրութիւնը ուղարկել է Նորին Վեհափառութեանը այսպիսի հեռագիր. «Тифл. Листокъ»-ի խմբագրութիւնը խորին յարգանօք անկեղծ շնորհաւորանք է ուղարկում Ձերդ Վեհափառութեանը խմբագրութեան ամբողջ կազմի կողմից մեծայիշատակ կուլտուրական տօնի՝ հայկական այբուբենի և հայ տպագրութեան յոբելեանի առիթով»։

—

Տառերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի առիթով Թիֆլիսի Յոյն Դրամատիկական Ընկերութեան նախագահ Ի. Գ. Բաստիանովի կողմից Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին ուղարկված է հետևեալ շնորհաւորական հեռագիրը.

«Էջմիածին, Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Յոյն Դրամատիկ. Ընկերութեան վարչութեան անունից բերում եմ իմ սրտագին շնորհաւորանքը յանձին Ձեր Սրբութեան բազմաստանջ հայ ազգին, որը քաղաքակրթութեան դրօշակը պահած ունենալով Արեւելքում Մեծ Բիւզանդիոնի ժամանակներից՝ այսօր տօնում է իր գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յոբելեանը։ Թող յունական «Ալֆավիտա» խօսքը, իբրև միջազգայնութիւն ստացած բառ, ծառայէ որպէս կապ բոլոր ազգերի միջև մի ընդհանուր՝ համայն մարդկութիւնը քաղաքակրթելու գործին»։

—

Երէկ Թիֆլիսից ուղարկվեցին Էջմիածին բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Նորին Սրբութիւն Վեհի անունով։

—

Երէկ Էջմիածին մեկնեցին դարձեալ շատ պատգամաւորներ՝ համազգային մեծ տօնի հանդէսներին ներկայ լինելու։

—

Հայ գրերի և տպագրութեան կրկնակ յոբելեանների առիթով Կովկ. Հայ. Հրատ. Ընկ.-ը լոյս է ընծայել Ստեփանոս Նազարեանի երկերի I հատորը, որին որպէս առաջաբան կցված է հեղինակի կենսագրականը, որ գրել է Ն. Աղբալեան, և Նազարեանի նկարը։

Հատորը, որ բաղկացած է ԾԱ+428 էջից, տպված է խնամքով և արժէ 1 ր. 50 կ.։

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

Ստացանք Կարսից՝ քաղաքային դպրոցի հայ աշակերտների շրջանում հաւաքված—10 րուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 226) ունենք ստացած ընդամենը 407 րուբլի։

—

(Նամակ խմբագրութեան)

Նոր-Նախիջևան, 8 հոկտ.

Այսօր, հոկտեմբերի 8-ին, փոխադրեցի սինօդ դպրոցական ֆօնդի համար 22,425 ր., որը ժողովել եմ՝ Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութիւնից 5000 ր., Պ. Վ. Խալաձեան, Ս. Կենջ-Օղլեան և Ց. Շապօշնիկեան ընկերութիւններից և Գ. Մ. Պօպօվից 2000-ական րուբլի, Ն. Կ. Ջերնեանից, Կ. Ց. Սրմաքէշեանից, Ս. Ն. Քիստեան ժառանգներից, Ց. և Մ. Հայրապետեաններից, Եղ. Յովհաննեան Ընկ.-ից, եղբարք Խնձորեաններից 1000-ական րուբ., եղբարք Մելքոնեան-Եզեկեաններից 600 րուբլի, Գ. Խ. Ջալխուշեանից, Գ. Մ. Ալաճալեանից, Մ. Ե. Պալապանեանից, Ց. Թ. Խորվաթեանից, Կ. Ա. Թիթրեանից, Ց. Մ. Ջալալեանից, Ց. Գ. Խաթրանեանից, Պ. Կ. Ջախրեանից 500-ական րուբլի, Խ. Խ. Ջալխուշեանից 300 ր., Ս. Մ. Անանեանից, Ս. Ռ. Քալալեանից, Հ. Ռ. Թիթրեանից, Վ. Կ. Թիթրեանից 100-ական րուբլի, Ն. Ց. Սուսանեանից և Բ. Ց. Քալալեանից 50-ական րուբլի, Ռ. Ց. Քալալեանից 25 րուբլի։ Ընդամենը՝ 22,425 րուբլի։

Հանգանակութիւնը շարունակում եմ։

Գր. Ջախուշեան

—

(Նամակ խմբագրութեան)

Կարս, 9 հոկտեմբերի

Կարսի քաղաքային դպրոցի հայ աշակերտներս, հետևելով մեր ուսուցիչ Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեանի խորհրդին, շնորհաւորում ենք տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեայ համազգային մեծ տօնը և յօգուտ դպրոցական ֆօնդի նուիրում ենք 10 րուբլի։

Յոյս ունենք, որ ամբողջ Ռուսաստանում գտնված բոլոր դպրոցների հայ աշակերտները իրանց լումաներով մասնակից կը լինեն դպրոցական ֆօնդին, որով թէ իրանց աշակերտական պարտքը կատարած կը լինեն և թէ ս. Մեսրոպի և Գուտենբէրգի գերեզմանը։

Ի դիմաց հայ աշակերտների՝

Գեղամ Մնջոյեանց, Ց. Աղաջանեանց,
Ն. Նիկողոսեան, Ա. Աբրահամեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ

Իւրաքանչիւր հռչակաւոր դէպք ինչպէս անհատի, այնպէս և մի ամբողջ ժողովրդի կեանքում հանդիսանում է կարևոր շարժառիթ՝ վերագնահատութեան ենթարկելու անհատի կամ ժողովրդի անցեալ գործունէութիւնը, մի յետադարձ օրեկիւով ակնարկ ձգելու անցեալի վրա առհասարակ։

Այսօր հայ ազգի համաժողովրդական մեծ տօնն է, հայ տառերի գիւտի 1500-ամեակի յոբելեանը, յիրաւի մի էլ աւելի վեհ, նուիրական ու նախանձելի եզակի դէպք, որպիսին կարող է կուլտուրական աշխարհի անկեղծ հիացմունքը առաջ բերել։

Որովհետև երբ մի ազգ, որ իր 1000-ամեայ գոյութեամբ նախ քան տառերի գիւտը և ապա 15 դար շարունակ, հանդիպելով բիւրաւոր փորձանքների, աղէտների ու կոտորածների, կարողացել է յամենայն դէպս ապրել, պահպանել իր գոյութիւնը—թէև ամենաաննպաստ պայմաններում—և, որ գլխաւորն է, իր մայրենի լեզուի ու գրականութեան շնորհիւ աստիճանաբար ազգովին առաջադիմել և քաղաքակրթութեանն ու քաղաքակիրթ երկիրների կուլտուրային հաղորդակից լինելու հաստատուն քայլերով ընթանալ, կը նշանակէ՝ այդ ազգը ունի իր մէջ կենսունակութիւն, ունի իրաւունք եթէ ոչ քաղաքականապէս, գոնէ ազատ մտաւոր ու բարոյական զարգացումով առաջանալու։

Եւ այսօր կարող ենք միայն թռուցիկ ակնարկով տեսնել, թէ ո՛ր չափով հայ ազգը կուլտուրապէս զարգանալու իր տուեալներով միացել է ընդհանուր քաղաքակրթութեան բարիքներին։

Սակայն ամենից առաջ մի ազգ կամ ժողովուրդ, մեր կարծիքով, ընդհանուր ազգերի լուսաւորութեանը յարվելու համար պէտք է անհրաժեշտօրէն ուժեղանայ ներքին կերպով, ներքին առաքինութիւններով, ներքին բիւրեղացմամբ։ Հայ ազգը, ճիշդ է, սկզբնական անկախ վիճակից յետոյ վերջին դարերում ծանր ու աննպաստ դրութեան մէջ է ապրել, բայց և այնպէս նրա կէս զանգուածը՝ ռուսահայութիւնը, ընդհանրապէս, գտնվել է այնպիսի պայմաններում, որ հնարաւորութիւն է ունեցել միանգամայն ընդարձակ չափերով զարգացնել, ուժեղացնել իր ներքին օրգանիզմը, որից կարող էին օգտվել նաև Թիւրքահայը և պարսկահայը։

Ու երբ՝ այսպէս թէ այնպէս՝ եւրոպացին հային համարում է կուլտուրական ժողովուրդ, մենք հայերս այսօր, մեր համազգային ամենամեծ տօնի օրը, արիութիւն ունենանք խոստովանելու, որ այդ ատեստացիան փոքր ինչ չափազանցված է, լըսվում է հեռուից...

Արդարև՝ այն, ինչ որ կարող էր անել կովկասահայը կամ ռուսահայը իր հայրենի գրականութեան ու կրթութեան համար, որոնք մի ազգի գոյութեան պատուանդանն են կազմում, մեթէ արված է։ Մեթէ կովկասահայի հարիւրաւոր միլիոններից կազմված է մի Մատիցա՝ ազգային ուսումը ապահովելու համար... Այսօր միայն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը՝ համակված դպրոցական ֆօնդ հիմնելու վսեմ գաղափարով՝ աշխատում է հաշտեցնել իր իսկական հայ անհաշտ հօտը... Դեռ չենք խօսում այն մասին, որ այդ ֆօնդը, ինչպէս երևում է բոլոր նշաններից, բաղկանալու է փշրանքներից՝ համեմատած կովկասահայ կրէզոսների անհամար հարստութեան հետ՝ և հակառակ այդ ֆօնդի մեծագոյն նշանակութեան։

Եւ մեթէ այն ծաղկեալ վիճակումն է մայրենի գրականութիւնը, մամուլը, որպիսին ցանկալի է ու կարող էր լինել, եթէ հայը ունենար ազգային ինքնաճանաչութիւն, ազգային ինքնապատուասիրութիւն... Եթէ ունի էլ, այն էլ թերի։

Անապահով դպրոց, ողորմելի՛ գրականութիւն...

Եկէք խոստովանենք այդ ճշմարտութիւնը գոնէ այսօր՝ մեր ազգային մեծ տօնին...

Դրական հակառակ, հայ ազգը—մասնաւորապէս ռուսահայը—ուժեղ է մի շարք բացասական յատկութիւններով. թերուսութիւն, կեղծիք, ամբարտաւան համարում, նախանձ, փոխադարձ թշնամութիւն—ահա մի քանիսը այդ յատկութիւններից, որոնցով սնւում, աճում և վերջանում է մեր կեանքը, որոնք ղեկավար են ներկայանում հայի մտաւորականութեան։

Որքա՜ն այլասերված ենք մենք նաև հոգեպէս...

Լսվա՞ծ բան է, որ հայի մէջ մի լուսաւոր, ազգաշահ գործ գլուխ կայ համերաշխութեամբ, առանց «հայկական» պայքարի։ Եւ կամ յարգում ենք դիմացինի ազատ խօսքը, կարծիքը որևէ ընդհանուր խնդրի առիթով։ Այսօր էլ՝ անգամ կրթված հայը անցնում է ոխի, հայհոյական բանակռւի բովից. այսօր էլ մեր երիտասարդութիւնը մաշվում է փոխադարձաբար վիհ փորելու, կրծել ու քէնով գործելու վարժութիւնների մէջ։ Ս. Մեսրոպի հնարած տառերով 20-րդ դարում աւելի են խրախուսվում հայի ազգային բացասական բնազդները։

Հաւատանք, որ մի գեղեցիկ օր վերջ է լինելու այս ամենին։ Եւ ոչ ապաքէն հայը կը տեսնէ աւելի գեղեցիկ, անհամեմատ սքանչելի օր, քան այսօր է, որ իր խոշոր նշանակութեամբ, իր նուիրական տօնով լցնում է իւրաքանչիւր հայի սիրտը, յուզում է նրա հոգին լուսաւոր ապագայի տենչով։

Ապա ուրեմն այսօր, ազգային վերագնահատութեան հրամայողական օրը, մեր բաղձանքն է, որպէսզի հայը կանգնէ ինքնաճանաչութեան հողի վրա, լըջօրէն հաշիւ տայ իր արդի գոյութեան մասին և առք դնէ մտաւոր ու հոգեկան վերածնութեան [illegible]

Այդ աւելի է կարևոր մեզ համար մանաւանդ այս դժնդակ օրերում...

Համազգային այս մեծ տօնը թող ծառայէ սիմվոլ մեր ազգային պատուի ու ինքնաճանաչման։ Մենք պէտք է ուժեղանանք ազգովին ներքին կերպով, որպէսզի կարող լինենք հետզհետէ իրացնել համամարդկային գաղափարները։

Մայրենի քաղցր հնչիւնը ստեղծագործող ս. Մեսրոպի և ս. Սահակի սրբազան յիշատակին բուռն ու կաթոգին յարգանք։

Ե.

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԵԾ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Երբէք մէկին չեմ նախանձում
Ես աշխարհիս երեսին,
Միայն գրագէտ դուք, պարոններ,
Նախանձում եմ ձեր բաղդին...

Յովհաննիսեան

Հայ հասարակութիւնը միաժամանակ երկու նշանաւոր յոբելեաններ է տօնում։ Խօսքս հայոց տառերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեայ յոբելեանի մասին է։

Ուշադրութեան արժանի է այն եռանդը, որով ոգևորված մի շարք գործիչներ և խմբակներ աշխատում են յիշատակել այդ մեծ տօնը։ Եւ այդ եռանդը ապացոյց է, թէ հայ ժողովրդի գոնէ որոշ խաւերը գնահատում են լուսաւորութիւնը, կամենում են նրա տօնը արտակարգ կերպով տօնել։

Իրաւ որ, այդ տօնի նախօրեակին մենք յիշեցինք, որ լաւ չը գիտենք մեր ազգի անցեալը. և ահա Պետերբուրգի հայ գաղութը յանձն առաւ մեզ մշակված և քննութեան ենթարկված Հայոց Պատմութիւն տալ։ Մի այլ խմբի ձեռներէցութեամբ իրագործվում է աւելի կարևոր և խոշոր գործ՝ մեր դպրոցների ապահովութեան դրամագլուխը, որ՝ պէտք է յուսալ՝ ամէն մի հայի աջակցութիւն կը գտնէ։ Դրանից զատ լոյս տեսան (և դեռ պիտի տեսնեն անշուշտ) մեր լուսաւորութեան ճանապարհը նկարագրող աշխատութիւններ։

Ես հաւատացած եմ, որ հայ ազգի բանիմաց մասը միջոցներ և եռանդ կը գտնէ այդ տօնը՝ խօսքի և մտքի տօն դարձնելու համար։ Սակայն թող ներվի ինձ, եթէ ասեմ, թէ առ այժմ, թւում է, այդ տօնը կարող է ոչ կատարեալ դառնալ հայ ժողովրդի մեծագոյն մասի համար։

Եւ ահա թէ ինչու։

Մենք ասում ենք՝ 1500 տարի գոյութիւն ունեն հայոց տառերը։ Սակայն մոռանում ենք, որ հայ ժողովրդի կէսից աւելին անգրագէտ է։

Մենք տօնում ենք տպագրութեան 400-ամեակը։ Մինչդեռ այդ 400 տարի տպագրվող գիրքը դեռ մինչև այսօր ճանապարհ չէ գտել դէպի ժողովուրդը։

Քանի մենք տօնում ենք մեր լուսաւորութեան, մեր լեզուի, մտքի, գրականութեան տօնը, ուրեմն մենք չը պիտի մոռանանք նրան, ով դարերի խորքից բերել հասցրել է մեզ հայոց լեզուն, ով իր ընտիր զաւակների ձեռքով գանձել է մեզ համար հայ մտքի և խօսքի հարստութիւնը։ Չը պիտի մոռանանք հայ ժողովուրդը։

Հակառակ դէպքում, մեր տօնը կարող է մի ճոխ քէֆի տպաւորութիւն թողնել, մի քէֆի, որտեղ սեղանաւորները փոքրիկ խումբակ են կազմում, իսկ հայ ժողովրդի մեծ մասը՝ սոված հանդիսատես է ներկայացնում, որ միայն դիտում է, բայց քէֆին չէ մասնակցում։

Իրաւացի է արդեօք այդպիսի դրութիւնը։

Ճիշդ է, ինձ կառարկեն, թէ դպրոցները արդէն իսկ ժողովրդի համար են լինելու։ Բայց չէ՞ որ դրանք միայն մատաղ սերունդի համար են. իսկ մեր հասակաւորների մէջ սաստիկ մեծ տոկոս են կազմում անգրագէտները։

Եւ ուրեմն, եթէ մի հրաշքով վաղը՝ նոյն իսկ ամեն մի գիւղում մի-մի դպրոց ունենանք, դարձեալ մեր ազգի մի կէսը անգրագէտ պիտի մնայ, զրկված պիտի մնայ գրքից, տպագրված խօսքից։

Որպէս զի գրագիտութեան այս մեծ տօնին մեր շուրջը—իբրև լռելեայն բողոք—չը շարվեն անթիւ անգրագէտներ, պէտք է ամեն կերպ աշխատել անգրագէտ հասակաւորներին գիր, կարդալ սովորեցնել։

Ամեն մի հայ պէտք է իր ազգի մտաւոր գանձարանի բանալին ունենայ. իսկ այդ բանալին գրագիտութիւնն է։

Հարկաւոր է, հէնց այսօր, դպրոցների հետ միաժամանակ, հիմնել գրագիտութեան և գիրք տարածող խմբակներ, նաև բաց թողնել ժողովրդական հրատարակութիւններ, եթէ կամենում ենք դպրոցի տուած արդիւնքը հաստատ պահել։

Կարծում եմ, անժխտելի է նման աշխատանքի կարևորութիւնը. չէ՞ որ գրագէտների քանակը մեծանալով կապահովէ գրողին և հրատարակչին. իսկ երբ դրանք ուժեղանան, հայ ժողովուրդը կունենայ լաւ հրատարակութիւններ, հայ գրականութիւնը զարկ կը ստանայ և կօգնէ աշխատաւորին իր դրութիւնը, նիստ ու կացը բարելաւելու։

Առաջարկիս առաւելութիւնը այն է, որ դժուար իրագործվողներից չէ, որովհետև մեծ միջոցներ չէ պահանջում. նա հիմնվում է անթիւ անհատների ինքնօգնութեան, փոխադարձ օգնութեան վրա և ամեն մի դէպքում չնչին զոհաբերութիւն է պահանջում։ Որպէս զի նպատակին շուտ հասնենք, ուրեմն առաջին քայլը հետևեալն է. պէտք է գրագիտութիւն տարածող ընկերութիւններ հիմնել. այդ ընկերութիւնները պէտք է տեղական բարբառներով ինքնուսոյցներ կազմեն և հրատարակեն, այնպիսի ինքնուսոյցներ, որոնց միջոցով անգրագէտը չնչին օգնութեամբ գրագէտ դառնայ։

Երկրորդ քայլը՝ մատչելի և օգտակար գիրք հրատարակելն է. այնպիսի գիրք, որի մէջ գրագէտը իր հարազատ լեզուն գտնէ և գրքից օգուտ քաղէ։ Իսկ երբ այդ իրագործվի աջող կերպով, հետևեալ քայլերը դժուար չեն լինի։

Համոզված եմ, միայն այդ դէպքում այդ մեծ տօնը իսկական տօն կը դառնայ ամբողջ ազգի համար։ Միայն այդ բոլորը ձեռնարկելով մենք պատշաճ կերպով տօնած կը լինենք երկու նշանաւոր յոբելեանները։

Կարծում եմ՝ հիմա շատերի համար աւելի հասկանալի պիտի լինեն բանաստեղծի խօսքերը.

Միայն գրագէտ զուք, պարոններ,
Նախանձում եմ ձեր բաղդին...

Չը մոռանանք ուրեմն այդ նախանձողներին, և մեզնից ամեն մէկը, որի սրտին մօտ է հայոց լեզուն, թող աշխատէ իրագործել այս առաջարկութիւնս։

Ց. Ղարագեօզեան

Նոր-Նախիջևան

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ

ՀԱՅ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ ՆԱԽԱՁԵՌՆԱՐԿ

Թող ամեն մարդ իր լուման տայ

Երէկ (սեպտ. 25) հաճելի անակնկալ մը ունեցանք։

Հայ գործաւոր մը, Յակոբ Յովհաննէսեան անունով, խմբագրատուն ներկայացաւ իր բանւորի տարազով և ըսաւ.

— Մենք Ազատ-Կափու գտնուող Օննիկ էֆ. Տէրոհնեանի չինիի փաբրիկային գործաւորներէն ենք, օրական 10—12 ղրուշ կը շահինք... ուզեցինք հայերէն գիրերու գիւտին համար ըլլալիք յոբելեանին առթիւ մէջերնիս հանգանակութիւն մը ընել և 284 ղրշ. հաւաքեցինք, զոր ահաւասիկ ձեզի կը յանձնենք։ Մենք ուսումնական չենք, բայց գիրին ու գիրքին յարգը գիտենք... մեր փրկութիւնը ան է։

Եւ մարդը սեղանին վրայ դրաւ հանգանակուած գումարը։

Այս ինքնաբերական ժէսթը այնքան գեղեցիկ էր, որ յուզումով առինք դրամը։

— Ձեր թերթին մէջ գրեցէք, որ մեր օրինակին հետևելով ուրիշներն ալ տան,— շարունակեց գործաւորը,— մենք արդէն ուրիշներէն դարձեալ պիտի ժողվենք։

Սորև կը դնենք այս առաջին ցուցակը և միևնոյն ատեն հրաւէր կուղղենք մեր բոլոր հայրենակիցներուն հետևելու այս գեղեցիկ օրինակին։

Հայկական տառերը մեր ազգային մեծագոյն փառքերէն մէկն են։ Անոնց շնորհիւ, դարերու ընթացքին, անկորնչելի մնացած է մեր լեզուն և մեր ցեղը։ Վարդաններէ ու Վահաններէ աւելի մենք մեր գոյութիւնը Մեսրոպի տառերուն կը պարտինք. անոնք յաղթած ու չէզոքացուցած են նոյն իսկ Չէնգիզխաններու կամ Ալփասլաններու աւերիչ աշխարհակալութիւնները։

Հիմա, մեծ յոբելեանին առթիւ մատուցանենք մեր երախտագիտութեան տուրքը այդ սիրական տառերուն։

Երբ հայ բանւորը, գրեթէ բնազդաբար, կը զգայ գիրին վեհութիւնը և անոր հանդէպ իր ունեցած պարտքը, մի՞թէ կրնա՞ն ուրիշները անտարբեր մնալ։

Բժիշկ, փաստաբան, երկրաչափ թող իրենց բաժինը բերեն այս հանգանակութեան։

Ուսուցիչներն և ուսանողները, համալսարանականները, խմբագիրները, գրաշարները և ձուլիչները՝ իբրև գիրին երախտաւորեալները փութան պարտքերնին հատուցանելու։

Արհեստաւորը, գործաւորը, շուկացին ու Չոլ վաճառականը իրենց կարողութեան չափով թող տան իրենց նուէրները։

Մենք մեր էջերը լայնօրէն պիտի բանանք այս հանգանակութեան առջև, հրատարակելով բոլոր նուիրատուներու անունները և ընդունելով մինչև մէկ ղրուշի նուէրը։

Հանգանակուած գումարը պիտի յանձնուի յոբելեանական յանձնաժողովին, որպէսզի որոշուած նպատակներուն գործածուի։

Մինչև հիմա, Կովկասի մէջ, 100,000 ռուբլի մօտ գումար մը հանգանակուած է այս նպատակին համար, կը լսենք, հարիւր հազար ոսկի, մինչդեռ հոս, մեր մէջ, տակաւին ոչ մէկ գումար կարելի եղած է հաւաքել։

Ասիկա ամօթ չէ՞ մեզի համար։ Միթէ հայկական տառերէն միայն մեր կովկասահայ եղբայրնե՞րը օգտուած են թէ՞ անոնք միայն գիտեն գնահատել ազգային փառքերը։

Դարմանենք, գոնէ մասամբ, մեր պակասը, քանի որ դեռ ժամանակ է։

Մեր կոչը, բնականաբար, կուղղենք ոչ միայն մեր ազգայիններուն, այլ նաև մեր կաթոլիկ ու բողոքական եղբայրներուն, վերջապէս բոլոր անոնց, որոնք հայ տառերու հանդէպ պարտականութիւն մը ունին։

(«Հառաջ»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11 հոկտեմբերի

Յալտա.—Թագաւոր Կայսրի և Օգոստափառ Դուստրների ներկայութեամբ տեղիս կրկէսում տրվեց Վլադիմիր Դուրովի և արտիստների մասնակցութեամբ երկրորդ ներկայացումը։ Ներկայացումը վերջանալուց յետոյ Թագաւոր Կայսրը բարեհաճեց ողորմածաբար խօսակցել Վլադիմիր Դուրովի հետ։

Պետերբուրգ. — Տեղեկատու բիւրօն կտրուկ կերպով հերքում է „Сынъ Отечества“, „Рѣчь“, „День“ և „Пет. Газета“ օրաթերթերում լոյս տեսած այն տեղեկութիւնը, թէ իբր ներքին գործերի մինիստրը մտադիր է հարց յարուցանել մինիստրների խորհրդի մէջ՝ ցէնզուրա հաստատելու Պետական Դումայի անդամների ճառերը մամուլում արտատպելուն համար։

Հռոմ.—Ստատս սեկրետար Կոկովցեվի առողջական դրութիւնը առանց փոփոխութեան է։ Տենդը մի փոքր իջել է։ Տաքութիւնը առաւօտը 38° էր։ Բորբոքումը ցոյց է տալիս ամբողջ դէմքին տարածվելու տենդէնց։ Քունը սակաւ է, որ բացատրվում է ուժեղ աղմուկով, որովհետև հիւանդի սենեակը գտնվում է բանուկ փողոցի վրա։

Թէհրան.—Ոգևորվելով այն հանգամանքից, որ Սպահանի նահանգապետ նշանակվեց բախտիար Սամսամ-ուս-Սալթանէն, այնտեղ գտնվող բախտիարները երես են առել։ Ռուսաց հիւպատոսը դժուարութեամբ մերժում է բէստերը։ Ազգաբնակութիւնը թշնամական դիրք է բռնել դէպի բախտիարները։

Լոնդոն.—Լրագիրների ասելով, Անգլիան բանակցում է Գերմանիայի հետ այն մասին, որպէսզի Գերմանիային զիջվի Զանզիբարը փոխարէն այն բանի, որպէսզի Գերմանիան ճանաչէ Անգլիայի բացառիկ շահերը Հարաւային Պարսկաստանում։ Նոյն կերպ բանակցութիւններ են վարվում, որպէսզի Աֆրիկայում մի քանի զիջումներ անվեն Անգլիայի կողմից՝ փոխարէն այն բանի, որ Գերմանիան ճանաչէ անգլո-թիւրքական համաձայնութիւնը վերաբերեալ Պարսկական ծոցին։

Լոնդոն.—Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն, անհիմն են այն սենսացիոն լուրերը, թէ իբր վէճ ու երկպառակութիւն են տիրում Անգլիայի և Միացեալ-Պետութիւնների միջև։

Բէնէշաու (Չեխիա).—Վիլհէլմ կայսրը, արքիդուքս Ֆրանց-Ֆերդինանդը և դքսուհի Հօհէնբէրգը մասնակցեցին փասեանների որսին։ Որսից յետոյ երեկոյեան Կոնոպիշտ ամրոցում տեղի ունեցաւ ճաշ։

Բերլին.—Թոքախտի դէմ մաքառող վեհաժողովում զանազան մասնագիտական զեկուցումների քննութիւնից յետոյ, կայացան մի շարք դասախօսութիւններ լուսապատկերներով մարդկանց և անասունների հիւանդութեան տեսակների ու շրջանների և բժշկութեան եղանակների մասին, նաև հիւանդանոցներ ու թոքախտը հետազօտելով ինստիտուտներ հիմնելու մասին։ Վեհաժողովը ընդհանուր ծափահարութեամբ ընդունեց պրոֆեսոր Պանվիցի ցանկութիւնը, որպէսզի կեանքի ապահովագրութեան մասնաւոր ընկերութիւնները դիւրացնեն իրանց միջոցներով թոքախտաւորների դրութիւնը, գործելով համերաշխօրէն թոքախտի դէմ մաքառող միջազգային դաշնակցութեան, նաև ապահովագրութեան պետական հիմնարկութիւնների հետ միասին։

Օպորտո.—Հանգստութիւնը Պորտուգալիայում վերականգնվեց։ Միապետականների պարագլուխ կոմս Մանգէլտան կալանաւորվեց։

Տօկիօ.—Մամուլը, հաղորդելով որ ռուսաց զինւորական մինիստրը այցելելու է Հեռաւոր Արևելք, յոյս է արտայայտում, թէ մինիստրի այցելութիւնը Ճապոնիա կը նպաստէ մանջուր-մօնղոլական հարցի նպաստաւոր լուծման։

Հելսինգֆորս.—Պարզվեց, որ խորտակված «Վէստկուստէն» նաւի զոհերի թիւը 34 է։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգում խօսում են, որ այս օրերս հրատարակվելու է պաշտօնական բնագիրը այն համաձայնութեան, որ կապված է Ռուսաստանի և Թիւրքիայի միջև և որը Ռուսաստանին բացառիկ իրաւունք է տալիս երկաթուղիներ կառուցանել Հայաստանում։

Հայկական հարցի վերարծարծման առիթով՝ աւստրո-ունգարական կառավարութիւնն իր շտաբի օֆիցերներից մէկին ուղարկել էր Թիւրքահայաստան՝ յատկապէս հրահանգելով նրան տեղն ու տեղը ուսումնասիրել երկիրը իր ամեն տեսակէտից, ինչպէս նաև հայ ժողովրդի պատմական անցեալը և ներկայումս ունեցած գործունէութիւնը։

Իրան յանձնված միսսիան աջողութեամբ գլուխ բերելուց յետոյ՝ օֆիցերը վերադարձել է իր հայրենիքը և իր ուսումնասիրութիւնների արդիւնքը հրապարակ հանել «Հայաստանի միջից» վերնագրով մի հատորով։

ՎԱՆԻ ՈՐԲԱՆՈՑՆ ՈՒ ՆՐԱ ՏԵՍՈՒՉ Պ. Հ. ԵՐԱՄԵԱՆԸ

Վանը, որ Թիւրքահայաստանի սիրտն է ու կենտրոնը իր ստուար հայ. ազգաբնակութեամբ, շնորհիւ հաղորդակցութեան աննպաստ պայմանների՝ կտրված-մեկուսացած է և արտաքին աշխարհի հետ լայն չափով կապ պահպանելու միջոցներից զրկված միանգամայն։ Այդ է անշուշտ գլխաւոր պատճառներից մէկը, որ այսօր այնտեղի հայերը տնտեսական ամենածանր ու դժուարին մօմենտներն են ապրում։ Այդ է պատճառը, որ առևտուրն զգալապէս կաղում է, և ժողովուրդն անզօր է գտնվում՝ իր մթերքներն արտահանել հեռաւոր շուկաներ և դրսի արդիւնաբերութիւնը առանց դժուարութիւնների ներմուծել երկիրը։

Չը նայած այդ բոլորին, սակայն, պէտք է ասել, որ Վանը իր կրթական գործով անհամեմատ բարձր է կանգնած Թիւրքահայաստանի միւս քաղաքներից։ Վանեցին միշտ բարձր է գնահատել կրթական-դաստիարակչական գործը և երկրի ամենադժնդակ, երկունքով լի վայրկեաններին անգամ չի վլացել իր սուղ միջոցներից բաժին հանել այն հիմնարկութիւններին, որոնք կոչված են եղել լոյս տարածելու դարերով թանձրացած խաւարի մէջ և ցրելու շրջապատի մռայլը։ Այս գիտակցութիւնը միշտ վառ է մնացել Վանի հայ հասարակութեան մէջ, որի շնորհիւ և նա կարողացել է քաղաքական ամենասոսկալի արհաւիրքների հանդէպ կենդանի պահել մայրենի լեզուն, գիրն ու գրականութիւնը մի շարք տարրական և միջնակարգ դպրոցների միջոցով, որոնց մէջ ուշադրութեան արժանի տեղ է բռնում 35 տարվայ պատկառելի շրջան անցրած որբանոցը, որի հիմնադիր վաստակաւոր տեսուչ պ. Հ. Երամեանը այսօր դուրս է եկել շրջելու հեռաւոր վայրեր՝ նիւթական միջոցներ հայթայթելու տարիներ շարունակ իր փայփայած հիմնարկութեան համար։

Որբանոցը՝ 35 տարվայ անդուլ, բեղմնաւոր գործունէութիւնից յետոյ՝ այսօր, երբ գտնվում է տնտեսական ծանր վիճակի մէջ, կարօտ է վտարանդի հայրենակիցների և օտարերկրեայ անհամեմատ ապահով հայերի լայն աջակցութեան։

Դպրոցի տեսուչ պ. Հ. Երամեանը 35 տարի շարունակ անձանձիր կերպով աշխատել է որբանոցի բարգաւաճման համար՝ չը խնայելով իր ֆիզիքական թոյլ ույժերն ու տնտեսական սուղ միջոցները։ Թիւրքահայաստանի պէս դժոխային երկրում նա արել է աւելին, քան կարելի էր։ Նա սիրում է իր ընտրած՝ դառնութիւններով ու զրկանքներով լի ասպարէզը մինչ այն աստիճան, որ այսօր՝ ինչպէս ինքն արտայայտեց խօսակցութեան ժամանակ՝ «իր կեանքի վերջալոյսին» դպրոցի ղեկը յանձնած իր պաշտօնակիցներից մէկին՝ դուրս է եկել շրջելու և նպաստ հայթայթելու յօգուտ այն հիմնարկութեան, որ իրանից յետոյ դեռ երկար տարիներ պէտք է ապրի և լոյս տայ պատմական Վասպուրականի ցաւատանջ իրականութեան։

Ցիրաւի մարդ ակնածում, պատկառանք է զգում այդ ալեզարդ, ֆիզիկապէս տկար, սակայն եռանդուն ու կորովի մարդու հանդէպ. մարդու, որ շնչում, ապրում է միմիայն իր դպրոցով և նրա ապագայ լուսաւոր օրերի հեռանկարով։

Մենք լիայոյս ենք, որ պ. Երամեանի 35-ամեայ բոլորանուէր բեղմնաւոր գործունէութիւնը գնահատութիւն կը գտնէ այն հիմնարկութեանց և անհատների կողմից, որոնց դուռը բաղխելու դժուարին ու ծանր միսսիան ստանձնել է նա այսօր։

Գ. Մելոյեան

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11 հոկտեմբերի

Աթէնք.—Հաշտութեան վեհաժողովի ենթա-մասնաժողովը համաձայնութեան եկաւ վակուֆների հարցի առիթով։ Թիւրք պատգամաւորները այդ մասին հեռագրեցին Բ. Դրան, խնդրելով թոյլտուութիւն հարցը ընդհանուր ժողովին առաջարկելու։

Կ. Պոլիս.—Ի նկատի ունենալով որ Ադրիանուպօլսի թիւրք զօրքերին բակական ծառայութիւնից արձակելուց յետոյ՝ դժուարութիւններ են ծագում, Կ. Պոլսի զինւորական նահանգապետ Ջէմալ-բէյը մեկնեց Ադրիանուպօլիս՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

Մեծ վէզիրը անհրաժեշտ կարգադրութիւն արեց՝ թողնելու անցնել նաւերին Դարդանէլով օրը չորս անգամ երկուսի փոխարէն, ինչպէս վերջերս էր։ Պարզվեց, որ ռուսաց դեսպանատան քայլերից յետոյ զինւորական մինիստը արձակել է ռուսաց նաւագնացութեան ընկերութեան երեք շոգենաւը, չը նայած որ բոլոր շոգենաւերը յարքունիս են գրաւված զօրքերին տեղափոխելուն համար, որոնք ուղարկվում են իրանց տները։

Վիեննա.—Վալօնից հեռագրում են. «Տեղի ունեցաւ ժամ. ալբանական կառավարութեան կազմած բազմամարդ ժողով։ Կառավարութեան նախագահը, քննելով երկրի ներկայ կացութիւնը, ցաւակցութիւն յայտնեց Էսադ-փաշայի ինքնագլուխ քայլերի առիթով և առարկեց կառավարութեան հասցէին ուղղված յարձակումներին։ Ժողովը վստահութիւն արտայայտեց ժամանակաւոր կառավարութեանը»։

Սօֆիա.—Եկաւ թիւրքաց դեսպան Ֆեթհի-բէյը դեսպանատան կազմով։

Բելգրադ.—Սկուպշչինան ընդհանուր վիճաբանութիւններից յետոյ ընդունեց փոխառութեան պայմանագիրը 67 ձայնով ընդդէմ 52-ի։

ԻՒՇՋԻՆՍԿԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Կիեվ, 11 հոկտեմբերի

Կարդացվում են բացակայ Կարաեվի ցուցմունքները, տրված քննիչին, որոնք մասամբ յայտնի են մեղադրական ակտից, մասամբ Մախալինի և Կրասօվսկիի ցուցմունքներից։

Մախալինն և Կրասօվսկին դէմ առ դէմ կանգնեցնում են. երկուսն էլ յայտնում են, որ մինչև Կրասօվսկիի առաջին հանդիպումը Կովկասից կանչված Կարաեվի հետ, Մախալինը տեսնվեց Կարաեվի հետ և ծանօթացրեց նրան գործի հանգամանքներին։ Կրասօվսկին կողմերի հարցերին ասում է, որ սկզբում հետախուզումները կատարում էր Միշչուկը, բայց երկու շաբաթից յետոյ, երբ գործը ստացաւ սենսացիա, Կիեվի ոստիկանութեան կազմը ուժեղացաւ օտարաքաղաքեայ լրտեսներով։ Պետերբուրգից եկաւ Կունցեվիչը. աշխատանքը կատարվում էր տարբեր ուղղութիւններով։ Երբ գործը յանձնեցին Կրասօվսկուն, օտարաքաղաքեայ լրտեսները շուտով ցրվեցին. ռիտուալ վէրսիայի մասին վկան գիտէր. յայտնագործումը աւետում էր նրան պաշտօնի բարձրացումն. այդ հանգամանքը եռանդ էր ներշնչում։

Բալօվինը կողմերի հարցին պատասխանում է, որ Չեբէրեակը լաւ համբաւ չունէր։ ամուսինը շատ քիչ էր տանը լինում. ծառայութիւնը յաճախ ընկերների միջոցով էր կատարում. այցելում էին կասկածելի անձինք, լինում էին քէֆեր. ամուսինը պատմում էր, որ նրան արբեցնում էին և յետոյ ինչ կամենում էին, անում էին։ 1910 թ. աշնանը Զայցեվի գործարանը ցանկապատեցին։ Մարտի վերջին վկան Չեբէրեակովյին տեսաւ յուզված. վէճի ժամանակ ասում էին, որ Իւշչինսկիի սպանութեան գործում խառն են եթէ ոչ իրանք Չեբէրեակովները, գոնէ նրա ընկերները։

1911 թ. Չեբէրեակովայի տան ներքևը ապրող Մալիցկայան ասում է, որ մի օր առաւօտեան մարտի սկզբին, Չեբէրեակովայի բնակարանում լսեց աղմուկ, երեխայի ճիչ, տարօրինակ հնչիւններ. վկան աւելացնում է, որ աղմուկից առաջ լսվեցին երեխայի քայլեր, բայց ոչ Ժենիայի, որի քայլերը նմանվում էին մեծի քայլերին։ Խաչաձև հարցերի ժամանակ Մալիցկայան բացատրում է, որ քննիչի մօտ առաջին հարցին յայտնեց, թէ ոչինչ չը գիտէ գործի մասին, որովհետև Չեբէրեակովան վախեցրել էր իրան. և պատմեց լամպի մասին Չեբէրեակովի հեռանալուց յետոյ։

Թաղական վերահսկիչ Կիրիչենկօն պատմում է, որ մարտի 20-ից յետոյ տեղեկութիւններ էր ժողովում սպանութեան մասին. ներկայ լինելով Չեբէրեակի բնակարանում կատարվող խուզարկութեանը, վկան Ժենիայի հետ միասին գտնվում էր փոքր սենեակում. երբ նա խօսեց Իւշչինսկիի սպանութեան մասին, Ժենիան վախեցաւ և ինչ որ կամեցաւ ասել, բայց Չեբէրեակովան միւս սենեակից սպառնական ժեստ արաւ. Ժենիան լռեց. վկան այդ մասին յայտնեց պրիստաւին և ասաց, որ կասկածում է Չեբէրեակովային սպանութեան մէջ մասնակցելում։ 1911 թ. օգոստոսին վկան ուղարկվեց Կրասօվսկիի մօտ։ Կրասօվսկիի հեռանալուց յետոյ աշխատում էր Վշիվկիի հետ. յետոյ գտնվում էր փոխ-գնդապետ Իվանովի իշխանութեան ներքոյ։ Վկան պատմում է, որ Չեբէրեակովի մօտ կատարվեցին մի շարք խուզարկութիւններ այն կողոպուտների առիթով, որ կատարում էին նրան այցելող գողերը։

Ուշ լինելու պատճառով նիստը ընդհատվում է։

Պետերբուրգ. — «Տեղեկատու Բիւրօն» յայտնում է. «Արդարադատութեան մինիստրութիւնը հարց տուեց Վարշավայի նահանգական դատարանի դատախազին լրագրական այն տեղեկութիւնների առիթով, թէ իբր բանտարկեալ Բէյլիսը խոստովանել է, որ ինքն է սպանել Իւշչինսկիին։ Դատախազը հեռագրում է, որ յիշեալ տեղեկութիւնները բոլորովին սխալ են»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վրաստանի էկզարխ Ինոկէնտիի մահվան 40-օրեակի առիթով Պետերբուրգում կայանալիք հոգեհանգստին ներկայ լինելու համար Թիֆլիսից մեկնեց Գորու եպիսկոպոս Անտոնին։

◆ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան գրասենեակում կայացաւ կօօպերացիոն նպաստող բիւրոյի անդամների նիստը։ Որոշվեց խնդրել իշխ. Գ. Թումանեանին ընդունել բիւրոյի նախագահի կոչումը։ Նախագահի օգնական միաձայն ընտրվեց Կայսերական Կովկ. Գիւղատ. Ընկերութեան քարտուղար Միքայէլ Վերմիշեանը։ Բիւրօն որոշեց խնդրել նոյն Ընկերութեանը՝ բաժին բանալ «Кавк. Хозяйство» թերթի մէջ կօօպերացիայի մասին։ Վերջում որոշվեց խնդրել ուր հարկն է, որպէս զի Թիֆլիսում գումարվի կօօպերատիվ ընկերութիւնների ներկայացուցիչների 2-րդ համագումարը։

◆ Վերադարձաւ Քութայիսի նահանգում կատարած ծառայական ճանապարհորդութիւնից երկր. գլխ. կառավարչի կովկասեան [illegible]որ Շաչկովսկին։

◆ Մեզ յայտնում են, որ թատրօնական շրջաններում շատ են խօսում երիտասարդ Սուրէն Խաչատրեանի մասին, որին համարում են հայ դերասանական խմբի ապագայ ռեժիսեօր: Յիշեալ Խաչատրեանը այս տարի աւարտելու է Մօսկվայի համալսարանի լեզուաբանական ֆակուլտէտը և միևնոյն ժամանակ, լինելով Ստանիսլավսկիի աշակերտը, աւարտում է Գեղարուեստական թատրօնի ռեժիսեօրական դասընթացքները: Պարոնը տիրապետում է հայերէնին բաւականաչափ:

◆ Մեզ տեղեկացնում են, որ բժիշկ Ի. Գոմարթէլին, որին Ջիրաթի գիւղի հասարակութիւնը մի քանի օրով հրաւիրել էր բժշկութեան, 3 օրվայ ընթացքում հիւանդներից ստացել է 340 ր. և այդ գումարը ամբողջապէս նուիրել այդտեղի գրադարանին:

◆ Այսօր թէ Արքունական և թէ Արտիստական Ընկերութեան թատրօններում տեղի կունենան ցերեկով էժան գներով ներկայացումներ:

◆ Ց. Զ. Տէր-Ստեփանեանի հաշուապահական դասընթացքներում հոկտեմբերի 15-ից բացվում են զուգընթաց բաժանմունքներ:

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատելով մսի սակագինը, ոչխարի մսի ֆունտը 13 կ. և տաւարինը՝ 11 կ., կարգադրել է ոստիկանական պաշտօնեաներին խիստ հսկել, որ մսավաճառները չը խախտեն յիշեալ սակագինը:

◆ Տեղական ռուս օրաթերթերի ասելով՝ Թիֆլիսի նահանգապետը պատուիրել է գնդապետ Դուբանոսին մեկնել Մցխէթ և ամենամանրազննին կերպով քննել տեղական պրիստաւ Ալանիայի վարմունքը, որ ծեծում էր մասնաւոր անձանց իր ծառայական պարտականութիւնները կատարելու ժամանակ: «З. Р.»-ի տեղեկութեան համաձայն, նոյն պրիստաւը յանձնվելու է դատարանի:

◆ Օդեսսայում օդագնացութեան դպրոցում քննութիւն է տուել և օդագնացի վկայական ստացել օմ Շիուկաշվիլի, որ Թիֆլիսում ևս կատարելու է մի քանի թռիչք:

◆ Պրոֆ. Զաբօլօդնին այն կարծիքն է յայտնել, որ ժանտախտը կարող է մուտք գործել Դօնի շրջանից Կովկաս ևս, ի նկատի ունենալով Կովկասում տիրող հակասանիտարական պայմանները:

◆ Պետերբուրգում վախճանված հօֆմէյստէր Նէչաեվ-Մալցեվը մի միլիօն ռուբլի կտակել է իր գործարանների բանւորներին:

◆ Երէկ, հոկտ. 12-ին, Ժողովրդական Տանը յոյն դրամատիկ սէկցիայի սիրողները սէզօնի բացման առիթով ներկայացրին «Իիրօս Տիս Մակեդօնիաս» (Մակեդօնիայի հերոսուհին) դրաման 3 գործ. հեղ. Կուրտիի և «Կարավօցակիզմենի» կօմեդիան՝ հեղ. Սալիվէրիի:

◆ Թիֆլիսի յոյն դրամատիկ խմբի սիրողներից կազմված է մի խումբ, որը պիտի շրջէ Կովկասի յունաբնակ վայրերը՝ մայրենի լեզուով ներկայացումներ տալու նպատակով: Յիշեալ խումբը առաջին անգամ կայցելէ Բաթում և Ցխաթուրի հոկտեմբերի կէսերից յետոյ: Կազմված ռեպերտուարը բաղկացած է ինքնուրոյն և թարգմանական պիէսներից:

◆ Բարերար անձանց ուշադրութիւնն ենք հրաւիրում ալէքսանդրօպօլցի Մարիամ Անանեանց անունով մի պառաւ կնոջ վրա, որը ներկայումս գտնվում է նիւթական ամենասուղ դրութեան մէջ: Օգնել ցանկացողները կարող են իրանց նպաստն ուղղել հետևեալ հասցէով. Հաւլաբար, Շաւի-գիւղ, Շիրաղակի նրբափողոց № 11:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Եւա Բրինէլլիի առաջիկայ համերգը

Երեքշաբթի, հոկտեմբերի 15-ին, Արքունական թատրօնում տեղի կունենայ կին-դիրիժեօր Եւա Բրինէլլիի սիմֆօնիական համերգը:

Բրինէլլին համարվում է առաջին կին-դիրիժեօրը և ունի երաժշտական մասնագիտութեան բազմակողմանի պատրաստութիւն:

Նա աւարտել է Հռոմի Երաժշտական Ճեմարանի դիրիժեօրական և կոմպօզիցիայի բաժանմունքը, որ վարում է պրոֆ. Սգամբատին:

Նա տուել է սիմֆօնիական համերգներ Պարիզում, Նիցցայում, Հռոմում, Պետերբուրգում, Պաւլօվսկում և Կիսլօվօդսկում: Ամենուրեք ունեցել է թէ բարոյական և թէ նիւթական աջողութիւն:

Թիֆլիսում համերգին մասնակցում է օպերայի ամբողջ օրկէստրը:

Ծրագիրը կազմված է Շուբերտի, Գրիգի, Սվէնդսէնի, Սիբէլիուսի և Վագների սիմֆօնիաներից:

Խմբագիր-հրատարակիչ՝
Ալ. ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԻՄԱՆԱՆ ԱՄԵՆՔԸ

PURGATIF
LAXATIF
SCAVULINE
LA BOITE
A. GABLIN
PH. DE 1re CLASSE
23, Rue Ballu
PARIS

Ամենքը պէտք է իմանան, որ առողջութեան համար չը կայ այնքան երկիւղալի բան՝ քան կապութիւնը, և որ այդ հիւանդութիւնը, որի վրա մենք թեթեւամտօրէն նայում ենք ինչպէս մի հասարակ անյարմարութեան վրա, իսկապէս լուրջ է այն տեսակէտից, որ նա մեր օրգանիզմի ներսում պահպանում է վարակի մշտական օջախը:

Եւ բացի այդ, բոլորը պէտք է իմանան, որ աւելի հեշտ բան չը կայ, քան կապութիւնը հեռացնելը, և բաւական է ընթրիքից յետոյ ընդունել Սկավուլինի մէկ կամ երկու դեղահատիկ, որը իր ներգործութիւնն է անում գիշերվայ ընթացքում, իսկ առաւօտեան, առանց որևէ ցաւի, առաջացնում նպաստաւոր հետևանք: Սկավուլինը վաճառվում է որպէս դեղահատիկներ՝ առանց որևէ համի, հետևաբար և կուլ է տրվում շատ հեշտութեամբ: Մէկ կամ երկու դեղահատիկ ընդունելուց՝ ներգործում է որպէս կակղեցնող միջոց՝ իսկ աւելի դեղահատիկներ ընդունելուց՝ Սկավուլինը ներկայանում է որպէս բոլոր լուծողականներից ամենագերազանցը: Նա ներգործում է հրաշալի կերպով, չէ առաջացնում ոչ թանչոց, ոչ գլխացաւ, և չէ պահանջում որևէ փոփոխութիւն սովորական նիստ ու կացի վերաբերմամբ:

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ

ԼՈՒԾՈՂԱԿԱՆ Է, ԴԵՂՀԱՏԻԿՆԵՐԻ ՄԷՋ, ԱՌԱՆՑ ՀՈՏԻ ԵՒ ՀԱՄԻ:

(В. 46674)

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ „ՀԻՊՆՕՏԻԶՄ“ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ:

Լոյս տեսաւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԷՐՋԵԱՆԻ

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը:



Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել հիպնօտիզմ, նրա պատմութիւնը և օրէնքը: Հիպնոտիզմի փորձառական շկօլաների թէօրիաները և զանազանութիւնները: Մարդկային մտքի երկուորեակ բնոյթը կամ գիտակցական և ենթագիտակցական մտքի փունկցիաները: Ներշնչման եւ ինքնաներշնչման օրէնքները: Իլլիւզիա կամ հալլիւսինացիա: Կատալեպսի: Յետ-հիպնօզական ներշնչումն: Հիպնօզական սէանսներ և ինչպէս տալ: Խորհրդի փոխանցումն կամ տելեպաթի Մտաւոր պայծառատեսութիւն՝ արթուն կամ քնած դրութեան մէջ: Ինչպէս կառավարել երեխաներին ներշնչումով:

ՄԵՐ ՄՏԱՒՈՐ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԸՐ.—«Ես եմ»-ը մարդու մէջ կառավարելու ույժը: Անհատականութեան կարեւորութիւնը: Դրական մտաւոր գործունէութիւն: Ինչպէս գործածել միտքը: Ենթագիտակցութիւն: Ցարատև փափաքի ույժը: Կենտրօնացման ույժը: Կամքի ույժը: Ենթագիտակցական հնարաւորութիւնները: Ներշնչման ույժը: Ինչպէս վարժեցնել ենթագիտակցութիւնը: Ինչպէս գործածել ամբողջ միտքը: Հաւատի ույժը: Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք: Ինչպէս ձեռք բերել աջողութիւն կեանքում և այլն:

Գրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար դիմել նամակով հետևեալ հասցէով.—Ռուսաստանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Гановская, Тифлисъ. Արտասահմանից. Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(Կ.) 385. 25—20

Լոյս տեսաւ և վաճառվում է

„ԾԻԾԱՂԱԲԵՐ“

պատկերազարդ



Հայրիկ, Բիսմարկ, Պուշկին, Պըլը-Պուղի, Մոլլա Նասր Էդդին և ուրիշ ազգային և օտար զուարճախօսներ 200-ի չափ ԸՆՏԻՐ անեկդօտներ: 128 էջ:

Գինն է 30 կօպէկ:

Պահեստը մեզ մօտ. մեզանից գումարով գնողներին 30$^0/_0$—40$^0/_0$-զեղչ՝ միայն կանխավճարով: Դիմել մշտական հասցէով՝ Тифлисъ, Лысогорскій пер. № 6.

ХАЧАТУРУ ХАЧАТРЯНУ.

Դիմել նաև բոլոր գրավաճառներին:

(Կ.) 812. 10—5

Ոսկէ մէդալ Լօնդօն 1893 թ.

Զգուշացէք կեղծիքներից

ՊՐՕՎԻԶՕՐ

Г. Ф. Юргенсъ-ի

Բօրնօ-Տիմօլեան Սապօն

Քրտինքի, այրուածքի, պէպէնների, ուգրիների, պզուկների և դեղին խալերի դէմ:

ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ.

Վաճառվում է ամենուրեք:

1 կտորը 50 կօպէկ, ½ կտորը 30 կօպէկ:

(Կ.) (М. 50331) 24—17

Գլխաւոր պահեստ՝ Москва, Г. Ф. Юргенсъ.

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ“

Только МИХАИЛА ЛЕБЕДЕВА

Съ надписью „Этикетъ утвержденъ правит.“.

Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько

Денисовскій

дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.

Главный складъ: Кавказскаго Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ

(Կ.) 177. 0—29

ՃԱՐՃԻԶՆԵՐ ԽՍԿԱԿԱՆ „ԱՒԱՆՍ“

ՀՕՐԻԶՕՆԱԿԱՆ, ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ և ՆԱՒԱՅԻՆ

(Մօտական եւ ստաժական)

1912 թի պատէնտաւոր նոր մօդէլը մինչեւ 300 ուժի:

Ուժի մէկ միութեան համար մէկ ժամում ծախսվում է 5/8 ֆ. նաւթ:

Ջրաղացների սարք ու կարգ:



Արժանացել 60 մէդալի և ամենաբարձր պարգեւների

Ռուսիայում գործածութեան մէջ են 4200 «ԱՒԱՆՍ»:

Նասօսների և էլեկտրական կայարանների ՍԱՐՔ ու ԿԱՐԳ:

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Է. Ա ԷԴԵՆԲԵՐԳԻ ԲԱԳՈՒՄ:

Կ. 522. 0—16

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ): Բժշկի բնակարանը՝ Սեմեօնօվսկայա, № 16.

(հ.ու.կ.) 804. 100—9

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (Ներարկումն 606 եւ 914-ով) միզասեռական, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների: Էլեկտրաբուժութիւն:

Ընդունե- (12$^1/_2$—2 ժ. ցերեկվայ:
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան:
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.:

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչա փող.), տէլէֆօն 11—75.

(հ. կ.) 785. 100—12

Չափահասների համար

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րէցէպտներով, խորհուրդներով և նկարներով: Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ: Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի: Գինն է 50 կ.:
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» րէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով: Գինն է 20 կ.:
3) «Կնիկարմատի շալվարը կամ մաշկի իւրկէն», խիստ ծիծաղաշարժ վօդէվիլ միմիայն չափահասների համար: Գինը 20 կ.:
4) «Սօնայի նշանդրէքը» յայտնի վօդէվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն: Գինը 15 կ.
5) «Միւնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գլխաւորների նկարներով: Գինը 7 կ.:
6) «Րաֆֆիի կենսագրութիւնը», պատկերով: Ամենքին հասկանալի գրված: Գինը 10 կ.:

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին: Պահանջողները պէտք է առաջուց դրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախքը՝ բոլոր գրքերը միասին—17 կօպ. (Անպայման՝ զակազնոյ): Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(հ. կ.) 44. 100—58

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Յօբելեանական հրատարակութեան

Երկրորդ հատորը

Մովսէս Խորենացի

Բազմաթիւ ձեռագիրների բաղդատութեամբ:

Գինը 2 ռուբ.:

Դիմել գրավաճառներին:

(ա.օ.) 862. 4—4

ЛАМПЫ
ВЕСТИНГАУЗЪ

БОЛЬШОЙ СКЛАДЪ
ЭЛЕКТРИЧЕСКИХЪ МАШИНЪ
и принадлежностей всякаго рода
у Русскаго Электрическаго О-ва
„ДИНАМО“
электро-машино-строительные заводы въ Москвѣ.
(Бывшіе Русск. Элек. О-ва ВЕСТИНГАУЗЪ).
Отдѣлъ перепродажи:
Москва, Мясницкая, 13.
Тел. Адресъ: «ОМАНИД».
Перепродавцамъ специальныя цѣны.

(П 105883) 10—10

Վարում եմ շատ և աջող կերպով բոլոր ՀԱՅ կօնսիստօրիաներում

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Հասցէս՝ С.-Петербургъ, Садовая 32, кв. 111
Телеф. 567—93.

(հ. կ.) (П 128042) 4—1

Въ С.-Петербургѣ вышла изъ печати

ЛЕВОНЪ ГРИГОРЯНЦЪ

ЧАЙКА

(Стихотворенія)

Переводъ съ армянскаго И. Гриневской, Аполлона Коринфскаго, В. Уманова-Каплуновскаго, М. Шагэ—М. Н. Шанъ-Гирей.

Съ портретомъ автора. Цѣна 20 к.

Розничная продажа: въ Тифлисѣ и въ Баку—у мѣстныхъ книготорговцевъ.

Складъ: С.-Петербургъ, 2 П. О. Редакція «Журналъ Лечебникъ».

(Կ. Հ. ու.) 864. 10—1

Մամուլի տակից

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԾԱՆՐ ԵՐԱԶ

պիէսը չորս գործողութեամբ

ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

Վաճառվում է «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում:

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

(օ. մ.) 815. 10—8



0—3 852. (Հ.Կ.)

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՑ

ռետինից՝ նուրբ, ամենալաւ տեսակը, դիւժինը, 1, 2, 3, 4 և 5 ռուբ. արժեցող, փամփուշտից՝ դուժինը 2, 3, 4 և 5 ռուբ. արժեցող: «Մարգօ» տեսակինը դիւժ. 2 ր. և 2 50 կ.: Լաւ յաջողութեան համար երաշխաւորում ենք: նոյնը ԿԱՆԱՆՑ համար, Դ-ր Պալօվի սիստէմով 4 ր., կատարելագործ. պէրֆէկտ. 6 ր.: Լուացումներ կատարող անգլիական սրսկիչներ—Դր Բօկի՝ 2 ր. 75 կ., կէսացրած ծայրով՝ 3 ր. 50 կ., զուտապէրչէ կարճ ծայրով՝ 3 ր. 50 կ., Գլօրիա-Մարգօյի, զուտապէրչէ կէս ծայրով—4 ր. 50 կ.: ՊԷՍՍԱՐԻՈ, հալեցված, դիւժ. 1 ր. 25 կ.: Գործիքներ ոսկուց՝ հատը 12, 13, 14, 15 և 16 ռուբ. արժեցող: Արծաթից՝ հատը 6 ռուբ.: Փղոսկրեայ՝ հատը 4 ռուբ., իսկ սպիտակ մետաղից, որ շատ ամուր է, հատը 4 ր. 50 կ., Բոլորն ուղարկում ենք վերադիր վճարով: Պրէյս-Կուրանտը ուղարկ. ենք փակ ծրարի մէջ, ձրի, միայն ճանապարհածախքի համար պիտի ուղարկել 14 կ. մարկա: Ռուսաստանում միակ պահեստը—„Марго“, Москва, Столешниковъ пер. д. № 7, отд. Д. (М. 378195) (Կ.) 4—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ից ԲԱՑՎՈՒՄ Է կուրսերի զուգընթաց բաժանմունք երեկոյեան ժամը 7$^1/_2$-ից սկսած պարապմունքներով:

Ընդունելութիւնը դպրոցում առ. ժ. 8-ից մինչև ցեր. 3-ը, I Тумановская, с.д. № 13.
Ընդունելութիւնը կուրսերում երեկ. ժ. 6-ից մինչև 10-ը, Михайловскій пр., № 17.

(ա.օ.) 851. 10—7

ԱՄՍԱԿԱՆ 100 ՌՈՒԲԼԻ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

կարող է ունենալ իւրաքանչիւր տղամարդ կամ կին՝ աշխատելով յարմար կերպով իր բնտանիքում: Հեռաւորութիւնը խոչընդոտ չէ լինում: Պայմաններն ուղարկում ենք ձրի: 1-ое Западное Т-во Вязальныхъ издѣлій. Варшава, Капуцинская 13—7. (Կ.) (В. 53362) 0—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный